

**ՄԱՆՈՒԵԼ ԶԱԽՉԱԽՅԱՍԻ «ՀԱՅԵՐԵՆ-ԻՏԱԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԻ»  
ՏԵՂԸ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ բառարանագրությունն ունի երկարատև և հարուստ պատմություն։ Այն սկիզբ է առել գրավոր շրջանի արշալույսին և անընդհատ զարգացմամբ հասել մինչև մեր օրերը։ Հայտնի են ձեռագիր ավանդված և տպագիր լույս տեսած բազմաթիվ մեծ ու փոքր բառարաններ, որոնք ունեն ճանաչողական որոշակի նշանակություն, և կազմում են հայ գրավոր մշակույթի մի ուրույն, ինքնատիպ մասը։ Հայերեն բառարաններում իրենց բառային արժեքն են ստացել մեր իրականության մեջ տարբեր ժամանակներում տեղի ունեցած հասարակական-քաղաքական, պետական-տնտեսական և գիտական-մշակութային կյանքի իրողություններ, ինչպես նաև հարեան ժողովուրդների և ազգերի վերաբերյալ մի շարք տեղեկություններ։

Հայ լեզվաբանության մեջ բավականին մեծ ուշադրության են արժանացել բառարանագրության պատմության հարցերը, իսկ տեսությունը, մի տեսակ, մնացել է ստվերում։ Վերջին ժամանակներս առանձին քննության ևն առնվել բառարանագրության տեսական հարցերը, ինչպես նաև հայերեն այս կամ այն բառարանի տեսական վերլուծության ընթացքում շոշափել է այդ հարցերի որոշակի մասը<sup>1</sup>։ Զգալի թվով բառարաններ արժանացել են կոնկրետ գնահատության։ Այնուհանդերձ, հայ բառարանագրության թե՛ պատմության և թե՛ մանավանդ տեսության մի շարք հարցեր դեռևս ուսումնասիրության կարիք ունեն։ Արգի հայերենագիտության կարեոր խնդիրներից մեկը նոր բառարաններ կազմելն է։ Այս առումով միանգամայն անհրաժեշտ է հայերեն բառարանների համակողմանի և խորը վերլուծությունը՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից, ընդգրկումից ու բնույթից։

XIX դ. մեղանում ստեղծվում են առավել մեծ թվով ձեռագիր և տպագիր բառարաններ։ Դրանց հիմնական մասն արժանացել է ընդհանուր բառարանագիտական քննության։ Սակայն կան նաև այնպիսի բառարաններ, որոնք կամ պակաս չափով են քննված, կամ ամենեկին չեն արժանացել որևէ ուշագրության<sup>2</sup>։ Այս կարգի բառարանների ուսումնասիրությունը բառարանագրության համար շատ կարեոր է և անհրաժեշտ։ Դրանք

<sup>1</sup> Ա. Սուքիան և այլ ան. Հոմանիշները ժամանակակից հայերենում. Երևան, 1967; Բ. Ղազարյան. Նոր Հայկազյան բառարան.- «Բանբեր Երևանի համալսարանի». Երևան, 1968, № 2, էջ 234-238։ Գ. Ջուկյան. Հայերեն անգամ հայերեն առաջնային լեզու. 1 մաս, ներածություն, բառագիտություն, գարօնածաբանություն. Երևան, 1968։ Ա. Սուքիան և այլ ան. Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1982, էջ 397-436։ է. Աղայան. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984, էջ 357։

<sup>2</sup> Գ. Համբարձումյան. Հայերեն ձեռագիր բառակազմական բառարանը.- «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 11, էջ 70-71։

կարեռագույն ուսումնասիրության աղբյուր են հայերենի բառապաշարի պատմության համար։ Նոր գրական հայերենի ձևավորման, զարգացման շատ հարցեր իրենց լիարժեք պարզաբանումը կստանան անցյալի գրավոր աղբյուրների, մանավանդ հայերեն բառարանների մանրակրկիտ և մանրագնին հետազոտության միջոցով։

Այս տեսակետից էլ, ահա, հարկ ենք համարում անդրադառնալ *XIX* դ. հայ բառարանագիր *Մանուել Զախշախյանի* գործին, ի նկատի ունենալով այն, որ հայերեն ամեն մի բառարան պետք է դառնա հատուկ ուշադրության առարկա և քննության առնվի ըստ ամենայնի<sup>3</sup>։

Զախշախյանն անհայտ և անծանոթ անուն չէ հայ գրավոր մշակույթի պատմության մեջ։ Նա *XIX* դ. I կեսի հայ մշակույթի նշանավոր գեմքերից է, *Միխթարյան* միաբանության խոշոր ներկայացուցիչ։ Մ. Զախշախյանը զրել է նաև բանաստեղծություններ, որոնց մի մասը հրատարակվել է հասուկ ժողովածուի մեջ՝ Վահրամ Ռուբենյան ստորագրությամբ։ Զեւագիր վիճակում թողել է երկրաչափությանը, մաթեմատիկային նվիրված և ուրիշ աշխատություններ։ Զախշախյանը, բացի իր մայրենի լեզվից, հիմնավոր կերպով տիրապետել է լատիներենին, իտալերենին, ֆրանսերենին, հունարենին, գերմաներենին, անգլերենին և տաճկերենին։ Նա եղել է մեծ մանկավարժ, թարգմանիչ, բանաստեղծ, սակայն նրա հիմնական տաղանդը դրսերվել է բառարանագրության ասպարեզում։

Մ. Զախշախյանը հմուտ բառարանագիր է։ Նա իր կյանքի մեծ մասը նվիրել է բառարանագրությանը և ստեղծել շատ արժեքավոր և մնայուն գործեր։ Նա եղավ առաջինը, որ ստանձնել է տալերենին առնչվող հայերեն բառարաններ կազմելու գործը։ Զախշախյանի «Հառարան յիտալական լեզուէ ի հայ և տաճիկ բարբառ»-ը պարունակում է չորրորդ 45000 բառահոդված։ Այն նախատեսված է լայն շրջանի ընթերցողների համար։ «Ի. յօրինել անդ զբառարանս ընտրելի դատեցաք կարդել զաս ո՞չ ի պէտս դեռավարժից կամ ռամկաց և եթ, որոնց շատ էր ունել ի ձեռին համառօտ բառագիրք բաղադրիչ հասարակագոյն բառից, և մեր իսկ դոյզն վասաակ և սակաւաքիրտն ջան, այլ առաւել գիտակն կալաք ի պէտս զարգացելոյ և հետամուտ բանասիրաց, որք դեգերին, դեգերել ախորժին յաղագս ազգս դպրութեանց, և ի զանազան իտալական մատեանս նախնի պերճախօս մատենագրաց, և ի բազմանիւթ գիրս արդեանց ամենազան դիտութեանց և արհեստից ի հմտանալ կամ ի փոխատրել զայնոսիկ ի հայ բարբառ»<sup>4</sup>։

Բառարանը կազմված է ոչ գպրոցական-ուսուցողական նոլատակներով, զրան ավելի դիտական բնույթ է տրված, այն է ծանոթացնել իտալական ողջ բառապաշարին՝ թարգմանաբար տալով դրանց համարժեք հայերենը և

<sup>3</sup> Մ. Զախշախյան հայերենի բարբառ հայ և իտալական։ Վենետիկ, 1837։

<sup>4</sup> Զախշախյանը ծնվել է Կյումուշիանեռում, 1770թ. մարտի 28-ին։ 12 տարեկան հասակում գնացել է Սուրբ Ղազար վանքը, 1791-ին ձեռնադրվել քահանան և զբաղվել քարողչական-ուսուցչական աշխատանքով, միաժամանակ կատարել թարգմանություններ լատին և իտալացի գասական գրողներից։

<sup>5</sup> Մ. Զախշախյանը մասնաւոր պատմություններ է պատմուել առաջին առաջական գործականությունների մասին։ Վենետիկ, 1855, էջ 19-163։

<sup>6</sup> Մ. Զախշախյանը մասնաւոր պատմություններ է պատմուել առաջին առաջական գործականությունների մասին։ Վենետիկ, 1804։

<sup>7</sup> Մ. Զախշախյանը մասնաւոր պատմություններ է պատմուել առաջին առաջական գործականությունների մասին։ Վենետիկ, 1804։

տաճկերենը: Գործը մեզանում առաջին ամենահարուստ բառարանն է, որն աչքի է բնկնում հատկապես լայն ծանոթագրություններով: Մ. Զախշախյանի բառարանագրական գլուխգործոցը «Բառգիրք ի բարբառ հայ և իտալական-Dizionario Armeno-Italiano» բառարանն է, որն անկասկած հանդիսանում է հայ երկլեզվյան բառարանագրության լավագույն նմուշներից մեկը<sup>8</sup>: Իտալարանի հրատարակության ավարտը հեղինակը չտեսավ: Նա մեռապի 1835թ. հունվարի 5-ին, 65 տարեկան հասակում, ստեղծագործական կյանքի ամենաեռուն շրջանում:

Իտալարանի վերնագիրը, հավանաբար, գրել են հրատարակիչները, մինչդեռ ինքն աշխատությունն անվանել էր «Ընդարձակ բառարան ի հայէ յիտալական»: Բառարանին կցված են հայերեն և իտալերեն լեզուներով ընդարձակ առաջաբաններ, որոնք հեղինակի գրչին չեն պատկանում, այլ ամենայն հավանականությամբ Սուլքիս Սոմալյանինն են: Այսպես ենք կարծում, որովհետև այդ ժամանակաշրջանում նա էր հովանավորում և ընթացք տալիս բառարանների հրատարակությանը<sup>9</sup>:

Մ. Զախշախյանի «Հայ-իտալերեն բառարանը» իր ժամանակի հետ սերտ կապված մի գործ է, եթե Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմելյանի և Մ. Ավետիքյանի «Նոր Հայկադյան բառարանի» հիմքը զուտ գրական աղբյուրներ են եղել, ասա Զախշախյանն իր բառարանի մեջ է մտցրել նաև այնպիսի բառեր, որոնք «չեն նախնի մատենագրաց, այլ արգիք և նորհնարք»: Օրինակ՝ ազատագիր, ազատագրեալ, ազատագրեմ, ազատագրութիւն, ակնարոյժ, ակնդի, ակնկալ, ակնոց, ակնոցագործ, ազերսագիր, աղիւսագործ, այբանարան, առնչութիւն, արևահատ, արեգգէմ, արևադարձ, արևածաղիկ, րազմարառ, բազմալեզուեան, բազմաշրջիկ, բաժանելի, գաճաճ, դրատուն, ղերասան, գերասանական, բառացի, գաշնագիր, գաշնակցութիւն, դատարկաշրջիկ, գաւագիր և այլն:

Առաջաբանում տրվում է հետեւյալ նշումը, որը շատ կարևոր է բառարանի գնահատության տեսակետից: «Ընդ արս ականաւորս, որք զտրամեանս ազգին զգիտութեան փուլթացան բարգաւաճ առնել եկաց արդարեւ և Մատենագիրս: Որ որպէս ինքն էր շտեմարան իմն ուսմանց և ազգ ազգ լեզուաց, նոյն և զազգ իւր իղձ իմն լինէր կացուցանել: Գիտէր զի ազգի իմոյ բարգաւաճութիւն յիմաստութեամբ այլոց ազգայն հանճարեղ մատենից լինի. այլ այս նմաւ թուէր շաւիդ, երկարուղի և բազմամեայ...» Եվ ավարտվում է հետեւյալով: «Սակայն զիարդ և միտք ուրուք հաճեսցի գատեալ կնքեսցէ զինիոն. այլ մեք որպէս կատակապահք ի լրումն ըղձից հանգուցելոյն ի լոյս ընծացեմք զայս մատեան, որ ի մատենագիրն աճիւնույն վերայ իրը արյան ինքնագիր գրոշմեալ կանգնի»<sup>10</sup>:

Եվ իսկապես, Զախշախյանի «Հայ-իտալերեն բառարանը» ամենաարժեքագորներից մեկն է, գա սոսկ երկլեզվյան թարգմանական բառարան չէ: Այն միաժամանակ հայերենի բացատրական, երբեմն հոմանիշների, գրաբար, բարբառային և հայերեն-տաճկերեն բառարանների ամբողջություն է:

<sup>8</sup> Մ. Զ ա խ շ ա խ ե ա ն. Բառգիրք ի բարբառ հայ և իտալական. Վենետիկ, 1837:

<sup>9</sup> Գ. Գ ա ս պ ա ր յ ա ն. Հայ բառարանագրության պատմություն. Երևան, 1968, էջ 141:

<sup>10</sup> Մ. Զ ա խ շ ա խ ե ա ն. Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, էջ ե:

*Մեղ ասածն ավելի պարզ դարձնելու համար բառահոդվածներից բերենք մեկ-երկու օրինակ:*

Սրինգ, սրնգի, սրնգաց, որ և Սրինկ, յն. փող կամ փչողական նուագարանաց այլ և այլ ձևով, մեծությամբ: Այս բացատրությունից հետո տրվում է իտալերեն թարգմանությունը, ապա՝ Եղեգնափողը: Այնուհետև տրվում է տաճկերեն համարժեքը՝ նեյ, կիրիճ: Flauto ևս՝ տ. Ձուրնա, տիւտիւկ, ևս՝ տ. Ջղրդմա: Pilfero. Հովուական սրինգ, տ. թուլում, ևս՝ տ. մլագալ կամ ո. տկնոր, տըկզար, տ. թուլում, ևս՝ Սաղմոսարան:

Օդ, գոյ, դույ, դովք, դի, դէ:Մին չորից տարերաց զոր շնչիմք տ. հաւա: Թարգմանությունից հետո՝ հաւու թոռուցելոյ յօդս, ունչք առ ի ձգելոյ զօդ: թոյլ զօդն ձգեցի զիս, զփոշին ցանել յօդս: Aria ացը.

Հեղինակը այնուհետև նշում է օգ բառի կիրառության կոնկրետ դեպքերը:

-Միւգ, մեղմ հողմ-ձայն մեղմոյ օդոյ: Aura, venti-cello. aura leggiera.

-Հողմ-օդք երբեմն սառնամանիսն շնչելով և անձրկք: Vento.

-Բարեխառն կամ պղտոր եղական մթնոլորտին-Դարձոյց զմրրիկն յօդ: մրրկածինօդք: Tempo buo'no կամ cattiro.

Եվ այսպես, օդ բառից ածանցված 50-ից ավելի գլխաբառեր իրենց առումներով, հոմանիշներով ու թարգմանություններով:

Այս ամենից երեսում է, որ Ձախջախյանը նախքան գլխաբառի թարգմանությանն անցնելը ընդարձակ բացատրություն է տալիս: Եթե բառն օտար լեզվից է վերցված, ապա գրում է, թե այն ինչ ծագում ունի, բացատրում է բառի կիրառության կոնկրետ դեպքերը: Հեղինակը միաժամանակ նշում է գլխաբառի քերականական հատկանիշները: Գլխաբառի բացատրական կողմին զուգընթաց հաճախ ուղղադրական, ստուգաբանական աշխատանքներ են կատարված: Գլխաբառերը շատ գեպքերում բացատրված են հոմանիշներով, երբեմն՝ գալառական-բարբառային բառերով:

Բառարանում որոշ գեպքերում տրված են միայն այն օրինակները, որոնցում գործածվել է տվյալ բառը, առանց որևէ բացատրության՝ «Տոմ-առին տոմիլ քարտեզ և դրեցին. տես՝ Տոմս»:

Որոշ բառահոդվածներ հեղինակային օրինակով ապահովելուց հետո Ձախջախյանը տալիս է զգալի թվով կապակցություններ: Հեղինակը չի նշել իր օգտագործած աղբյուրները, բայց հայտնի է, որ «Հայ-իտալերեն բառարանը» կաղմելուց հետո ծանոթացել է «Նոր հայկազյան բառարանի» ձեռադրին և բառարանում կատարել անհրաժեշտ լրացումներ: Ձախջախյանի հիմնական աղբյուրը մեր դրականությունն է, սակայն նա այդ քիչ է համարել: Մի բան պարզ է, սակայն, որ նրա օրինակները, կապակցությունները և մեջբերումները վերցված են մեր պատմությունից և թարգմանական գրականությունից, ինչպես նաև հեղինակային են:

«Հայ-իտալերեն բառարանի» վերջում Ձախջախյանը տվել է «Անուանք անձանց» (900 բառ), օրինակ՝ Աբաս-Abas, Աբգար-Abgaro, Վարդ-Vart և այլն, ինչպես նաև «Աշխարհագրական անունք» (700բառ), օրինակ՝ Աղթամար կղզի-Aktamar, Երևան ք.-Eriwan, Ալիս գետ-Alis և այլն: Հատուկ անունների բաժնում տըկզար են նաև բառեր, որոնք այս կամ այն տեղացի

իինեւն են ցույց տալիս, ինչպես՝ Խորենացի-Corenēns, Շիրակացի-Sciragunense և այլն:

«Հայ-իամալերեն բառարանի» դերն արժեքավորվում է հատկապես նորակազմ բառերով, որոնց մի գդալի մասը համարում է հայոց բառապաշտիր և գործածական է նաև մեր օրերում: Մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնք չկան հին շրջանի բառերն ընդգրկող բառարաններից, օրինակ՝ «Նոր հայկացյան բառարանում» (1836-37թ. Վենետիկ):

Ամփոփ ձեռով կարելի է ասել, որ այս բառարանը կազմված է հետևյալ սկզբունքով՝ գլխարառ, քերականական նշում, բացատրություն: Բառարանը, ըստ մեր հաշվումների, պարունակում է մոտ 1630 նորակազմ գլխարառ: Վերջիններս, ինչպես բոլոր մյուս նորակազմությունները, հետաքրքիր են իրենց թե՛ իմաստային, թե՛ բառակազմական կողմերով: Փորձենք առանձին-առանձին անդրադառնալ դրանց:

ա) Բարդ բառերը, որոնց ներսում իրենց հերթին մեծ թիվ են կազմում հոգակամով՝ բարդությունները. ականաչափ (էջ 14), ականակապ, ակնոցագործ (ակնոց շինող) (էջ 15), աղբաժողով (աղբակույտ, աղբանոց) (էջ 23), դիակեր (կերող դիականց) (էջ 1414թ.), ջրահմայ (որ ջրով հմայութիւնիս, դիվթաթիւ կործէ (էջ 1221թ.)), ջրագէտ, ջրագիր (էջ 1221թ.) և այլն:

Գոյականով և բայարմատով՝ կամ բայահիմքով՝ բաղադրված բարդ բառերով. շաբաթապահ (որ պահէ զհրէական շաբաթն (էջ 1092թ.)), նոտրագիր (գրեալ նօտր գրով (էջ 1091թ.)), յուսաբեկ (յուսահատ (էջ 1047թ.)), մոմապատ (էջ 1998թ.), մոմագործ (մեղրէ մոմ ճերմկցնող կամ թափող (էջ 1998թ.)), մղապատ (միգապատ (էջ 993թ.)), մետաղահան (էջ 972թ.), մեռելահմայ (մեռելահմայութիւնի (էջ 971թ.)), ձկնավաճառ (ձուկ ծախող (էջ 918թ.)), ձիավար (որ հեծանէ յերիվար, որ վարէ զծի (էջ 917թ.)), ձիավաճառ (էջ 917թ.), ձիապան (սէիս (էջ 917թ.)), կեղտահան (հանօղ զկեղտու' ի հանդերձից (էջ 771թ.)) և այլն:

Գոյականական բաղադրիչներով հետևյալ բարդությունները՝ հոգակապով կամ առանց հոգակապի. ձորագիւղ (էջ 919), ծաղկագիր (գիր՝ ի ձև ծաղկանց (էջ 715թ.)), ծաղկանկար (նկարիչ ծաղկանց (էջ 715թ.)), կաղաբոյս (ծաղկի սոխ (էջ 740թ.)), կանոնագիրք (կանոնագիրք (էջ 750թ.)), կատակերգ (Տ' կատակերգակ և կատակերգութիւնի (էջ 755թ.)) և այլն:

Ածտկանական և գոյականական բաղադրիչներով հետևյալ բաղադրությունները. շիկահեր (էջ 1101թ.), մեծահամբավ (մեծահոչակ ըստ անդ նշանակության (էջ 964թ.)), մեծակառույց (մեծաշեն (էջ 964թ.)), նրբամասն (որոյ նուրբ են մասունքն (էջ 1090թ.)), նրբամիտ (սրամիտ (էջ 1090թ.)), հաղթաբագուկ (էջ 1010թ.), ժահագիմ (դարշելի դեմք, տգեղ (էջ 584թ.)), թաւամութ (ստուար է մորթ (էջ 564թ.)), թանձրամորուս (ունօղ թանձր մորուաց (էջ 561թ.)), թանձրաբարբառ (որոյ թանձր է բարբառ կամ ձայն (էջ 560թ.)), գժուարասեպ (Տ' դժուարաժայռ (էջ 412թ.)), գաղտամիտ (խորամանկ (էջ 341թ.)) և այլն:

Կան նաև ածականով և բայարմատով՝ բաղադրված բարդություններ. նախանձալլուկ (նախանձարեկ (էջ 1057թ.)), համընթաց (համրագնաց (էջ 1013թ.)), հեշտակեաց (փափկակեաց, փափկասէր (էջ 870թ.)), բարձրածիգ (որ ձգէ ի բարձունս կամ ի բարձանս (էջ 304թ.)), աւելակեր (էջ 341թ.):

262)), ազատագրեալ (ազատագիր, ստրուկ թողեալ յազատութիւնի (էջ 3)), վշտազգած (վշտազգեաց (էջ 1344\*)) և այլն:

Նկատելի են նաև մասնակի դեպքեր, որոնցում բաղադրող հիմքը գոյական կամ գերանուն է, իսկ բաղադրվող հիմքը գոյական, ածական, կապ և այլն. նոյնանշան (զնոյն նշանակութիւնի ունօղ բառք (էջ 1802\*)). շարժառիթ (շարժող առիթ (էջ 1099\*)) և այլն:

բ) Ածանցավոր բառերը, անկախ հիմքերի պարզ կամ բաղադրյալ կազմություն ունենալու հանդամանքից, բաժանվում են երկու խմբի՝ նախաճանցավոր և վերջածանցավոր:

Նախաճանցավոր բաղադրություններում հանգես են գալիս ան-, ներգեր-, նախ-, համ-, հար- նախաճանց-նախամասնիկները. Համադիր (որ զնոյն դիրս ունի (էջ 819\*)), Համակենդրոն (որք ունի զնոյն կենդրոնս (էջ 821\*)), ներդաշնակեմ (դաշնակեմ (էջ 1068\*)), անհամաձայն (ոչ համաձայն (էջ 114\*)), անսատար (ոչ ունի սատար, անօգնական (էջ 151\*)) և այլն:

Վերջածանցավոր բաղադրությունները հիմնականում բաղադրված են -ութիւն, -ումն, -ան, -իչ, -աւոր, -արան, -ոց, -ային, -ական ածանցներով: Աբրայական (պատշաճեալ աբրայի (էջ 1\*)), դիմահարութիւն (ոչ լինելն մարմնոյ թափանցիկ (էջ 416\*)), դրադդութիւն (վատարանութիւնի (էջ 407\*)), ագցանակ (ակցան (էջ 2)), ականջաւոր (որ ունի ականջս (էջ 15)) վայելչարանութիւն (պերճարանութիւն (էջ 1296\*)), սրսկիչ (որ սրսկէ (էջ 1286\*)): Այստեղ կարելի է նշել, նաև բայական-ձևակազմական շամ, -եմ մասնիկներով կազմված բայերը ցոփանամ (*Մեղկի՛ լի վարւ, խենեշանալ, անառակիլ, ափեղ ցփեղ կենալ (էջ 1416\*)*): Պետք է հիշատակել նաև -ումն ածանցով քերականական անվանումները. ածանցումն (բառ քերականական (էջ 13\*)):

Համեմատաբար քիչ են բարդածանցավոր բառերը. ջրաչափութիւն (էջ 1222\*), ցուցամոլութիւնի (սնափառութիւնի (էջ 1416\*)), ջրավախութիւն (երկիւղ ի ջրոյ, է ախտ ինչ պատճառեալ ի թունոյ խածուածոյ կենդանեայ կատաղելոց, մանավանդ շանց (էջ 1222\*), ջրակլուական (էջ 1221\*)), ջրագրութիւն (գիտութիւնի, որ ճառէ զջրոց (էջ 1221\*)): այլն:

գ) Նորակազմությունների մեջ կան նաև տերմիններ: Օրինակ՝ ջր (ջուր) ձևավոր հիմքով ունենք չըաբաշխութիւն (գիտաճյուղի անվանումը (էջ 1220\*)), ջրալից (ջրալից ուռուցք (էջ 1221\*)), ջրալից (փոշտանկութիւն (էջ 1221\*)), ջրածին (նյութի անվանում (էջ 1221\*)), ջրանցիկ (խողովակ, ագուգա (էջ 1222\*)), ջրասուզակ (մարդ (էջ 1221\*)), ջրբուխ (շատրվան, ջուր վեր հանող մեքենա (էջ 1222\*)), ջրգողութիւն (մարմնի որևէ մասում ջրի կուտակում (էջ 1223\*)), ջրհան (ջուր հանող մեքենա (էջ 1223\*)):

Բառակազմության առումով հետաքրքիր են մասնավորապես հետևյալ դեպքերը. դլխարառերի մեջ հանդիպում են բառեր, որոնց դիմաց «Նոր հայկազյան բառարան»-ն ունի ուրիշ ձևեր. Գուհար բառի դիմաց «Նոր հայկազյան բառարան»-ն ունի Գոհար բառը: Այս դեպքերը պատահական չեն: Դրանք այդ բառերի զուգածե գրություններն են:

Այսպիսով, *XIX* դ. հայ բառարանների մեջ իր որոշակի կարեռությունն ունի Մ. Զախարյանի «Հայերեն-իտալերեն բառարանը»: Այն կազմված է

Եղել գործնական նպատակով, ներկայացնում է բառարանագրական որոշակի առանձնահատկություններ, պարունակում է այնպիսի բառեր, որոնք չեն հանդիպում գրաբարի բառարաններից հատկապես «Նոր Հայկագյան բառարան»-ում: Մ. Զախարիսյանի բառարանի բառապաշարի տվյալներն անհրաժեշտաբար պետք է նկատի ունենալ մեր օրերում ձեռնարկվող Հայերնի պատմական բառարանի ստեղծման ժամանակ:

## МЕСТО "АРМЯНО-ИТАЛЬЯНСКОГО СЛОВАРЯ" МАНУЭЛА ДЖАХДЖАХЯНА В АРМЯНСКОМ СЛОВАРОВЕДЕНИИ

ЛИАНА АРУТИЮНЯН

### Р е з у м е

"Армяно-итальянский словарь" М. Джаджахяна занимает особое место в армянском словароведении. Это еще и толковый словарь. В нем отражен целый ряд неологизмов, не встречающихся в "Новом армянском словаре". Они интересны особенностями как этимологического, так и смыслового характера.